ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

6 սեպտեմբերի 2024թ. թիվ 970

Ա.ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄԵԿՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմամբ սահմանված կարգի 1-ին հավելվածի 7-րդ կետով, ՀՀ վարչապետի 2018 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1230-Ն որոշմամբ սահմանված կարգի 9-րդ և 12-րդ կետերով, հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի օգոստոսի 26-ի N ԳՍ/17.3/27422-2024 և ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալի 2024 թվականի օգոստոսի 29-ի N 1105/45328-24 գրությունները, հաշվի առնելով Թայյուանի Էներգիայի և ցածրածխածնային զարգացման ֆորումի կազմակերպչական կոմիտեի 2024 թվականի հունիսի 24-ի հրավերը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Արուս Թումանյանին ս/թ սեպտեմբերի 9-ից 12-ը ներառյալ թույլատրել մասնակցելու ՉԺՀ-ի Շանսի նահանգի Թայյուան քաղաքում կայանալիք «Էներգիայի և ցածր ածխածնային զարգացման» խորագրով ֆորումին:

2. Ա.Թումանյանի՝ ՉԺՀ-ի Շանսի նահանգի Թայյուան քաղաք մեկնման հետ կապված ծախսերը հոգում է հրավիրող կողմը:

3. Ա.Թումանյանին՝ վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում այցի արդյունքների մասին հաշվետվություն ներկայացնել Լոռու մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարին և ՀՀ արտաքին գործերի նախարարություն:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Recoverable Signature

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Signed by: ASHRAFYAN KAMO 2610780427 Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

2024թ. սեպտեմբերի 6
ք.Վանաձոր